ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ

ՈՐՈՇՈՒՄ 32/7

04-ը հոկտեմբերի 2018 թվականի

ԵՊՀ ԻՄ-Ի ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ և ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ԱՍԻՍՏԵՆՏ, ՖԻԶԻԿԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԿԱՐԵՆ ՀԱՅԿԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ ԴՈՑԵՆՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԿՈՉՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼՈՒ և ՄԻՋՆՈՐԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի ասիստենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու **Կարեն Հայկի Հովսեփյանի** գիտամանկավարժական գործունեության տվյալները լիովին համապատասխանում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հուլիսի 9-ի ‹‹Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին›› N 615 որոշման 2-րդ՝ ‹‹Դոցենտի գիտական կոչում շնորհելը›› բաժնի բ. ենթակետի, ինչպես նաև այդ հարցում նորմատիվային այլ փաստաթղթերի պահանջներին, ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ Երևանի

պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Երաշխավորել ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի ասիստենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու **Կարեն Հայկի Հովսեփյանին** դոցենտի գիտական աստիճան ստանալու համար:
2. Միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի ասիստենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու **Կարեն Հայկի Հովսեփյանին** շնորհել դոցենտի գիտական կոչում և համապատասխան առաջարկով դիմել ՀՀ ԲՈԿ:

Գիտական խորհրդի նախագահ_____ Ա.Վ. Ցուցուլյան